



Funded by
the European Union



Shaping the Future by
Changing Today
N. JANASHIA

ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ

Հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ՝ «Քաղաքացիական հասարակության հզորացում հանուն ներառական և կանաչ հետքով իդային վերականգնման» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է CENN-ի կողմից՝ Խորհրդակցությունների և ուսուցման կենտրոն (CTC), Քվեմո Քարթլիի մեդիա (KKM) և Առաջին եվրոպացի (FE) գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ:

Նյութի բովանդակությունը բացառապես իրականացնող կազմակերպությունների պատասխանատվությունն է և կարող է չափսացվել Եվրոպական միության տեսակետները:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինքնակառավարման էությունն ու սկզբունքը.....	3
Ինքնակառավարման իրականացման այլընտրանքային սկզբունքներ...	4
Տեղական ինքնակառավարման լիազորությունները.....	5
Որոշումների կայացման գործընթաց.....	9
Քաղաքացիների մասնակցության ֆորմալ մեխանիզմները.....	11
Տեղական բյուջետային գործընթաց.....	14
Մասնակցային բյուջետավորում - քաղաքացիական բյուջե.....	18
Օգտագործված գրականություն.....	20

→ **ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔԸ**

Ինքնակառավարումը քաղաքացիների ինքնակազմակերպման ձև է, որի միջոցով համատեղ լուծվում են ընդհանուր շահ ներկայացնող հարցերը: Բնակչության կողմից ընդունված որոշումներն իրականացնում են իրենց կողմից ընտրված տեղական մարմինները (քաղաքապետ, սակրեբուլո):

Ինքնակառավարման իրավունքը երաշխավորված է Սահմանադրությամբ:



ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԿՐԱՍՏԱՆԻ ԶԱՐԱՔԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ ՈՒ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆ Է՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ, ԿՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՏԵՂԱԿԱՆ ՆՃԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ:

Տեղական համայնքի կողմից հարցի ինքնուրույն լուծումը առաջին հերթին նշանակում է, որ քաղաքացիներն իրավունք ունեն՝

- Ժողովրդավարական ճանապարհով ընտրել ներկայացուցիչներ,
- Ընտրվել որպես ներկայացուցիչ:

Այս իրավունքը երաշխավորված է Սահմանադրությամբ և օրենքով:



ԶԱՐԱՔԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ և ԸՆՏՐԿԵԼՈՒ ԱՅՂ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ՝ ԱՆԿԱՆ ՌԱՍԱՅԻՑ, ՄԱՇԿԻ ԳՈՒՅՆԻՑ, ԼԵԶԿԻՑ, ՍԵՌԻՑ, ԿՐՈՆԻՑ, ԶԱՐԱՔԱԿԱՆ և ԱՅԼ ՀԱՅԱՑՔՆԵՐԻՑ, ԱԶԳԱՅԻՆ, ԷԹՆԻԿ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ, ԾԱԳՈՒՄԻՑ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԿՈՉՄԱՆ ԿԱՐԳԱԿԻՃԱԿԻՑ

Համապատասխանաբար, նույն համայնքի կողմից ընտրված տեղական մարմինները ծառայում են որոշակի սահմաններում ապրող բնակչության ընդհանուր շահերի իրականացմանը:

Տեղական մարմինների միջոցով ընդհանուր շահ ներկայացնող հարցերի լուծումը հիմնված է օրինականության, հրապարակայնության, պատասխանատվության և այլ սկզբունքների վրա:

Մասնավորապես, օրինականության և հրապարակայնության սկզբունքների պաշտպանությունը ենթադրում է մունիցիպալ մարմինների համապատասխանեցում օրենքին և տեղի բնակչության համակարգված իրազեկում: Սա իր հերթին նպաստում է բնակչության մասնակցությանը ինքնակառավարմանը:

Պատասխանատվության սկզբունքը ենթադրում է տեղական համայնքի պատասխանատվությունը ինքնակառավարման իրավունքի իրացման հարցում, որն արտահայտվում է ժողովրդավարական միջոցներով տեղական մարմինների՝

սակրեբուլոյի և քաղաքապետի ընտրությամբ: Ընտրված մարմինները պատասխանատու են հասարակության առաջ և հաշվետու են իրենց գործունեության համար, ինչը ինքնակառավարման իրականացման գործում պահանջում է հասարակության մասնակցությունն ու վերահսկողությունը:

→ **ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ**

Ժողովրդավարական ճանապարհով ինքնակառավարման իրավունքի իրացումը՝ ընտրությունների միջոցով, սկսվում է ներկայացուցիչների ընտրությամբ, բայց դրանով չի ավարտվում:

Քաղաքացիների ակտիվ մասնակցությունը որոշումների կայացման և իրականացման գործընթացին անհրաժեշտ է հասարակության իրավունքների և շահերի առավելագույն իրացման համար: Դրա հիմնական պատճառն այն է, որ տեղական խնդիրները տարբեր ժամանակներում և պայմաններում բնութագրվում են տարբեր առանձնահատկություններով: Բնակչության կողմից ընտրված ներկայացուցիչները, ընդհանուր շահերի վրա հիմնված որոշումներ կայացնելու գործընթացում, հաճախ չունեն ամբողջական տեղեկություն կամ ընդհանուր կամք: Այսպիսով, տեղական բնակչության ինքնակառավարմանը մասնակցության հիմնական նպատակը նրանց ակնկալիքներն ու պահանջները ճիշտ ընկալելն է, ինչը նախապայման է տեղական կարիքներին հնարավորինս հարմարեցված որոշումներ կայացնելու համար: Սա չի նշանակում միայն տեղեկության փոխանակում համայնքի և տեղական մարմինների միջև:

Ինքնակառավարման իրավունքի արդյունավետ իրականացումը և տեղական քաղաքականության լավագույնս հարմարեցումը ընդհանուր շահերին տեղի են ունենում այն ժամանակ, երբ հանրային մասնակցությունը բնութագրվում է քաղաքացիների իշխանությամբ: Մասնակցության այս տեսակը տեղական քաղաքականության մեջ ներգրավվածության ամենաբարձր մակարդակն է: Այս դեպքում տեղական իշխանությունների և բնակչության միջև գործում են գործընկերության մեխանիզմները, և քաղաքացիներն ունեն իրական լծակներ որոշումների կայացման և կատարման վերահսկողության վրա:

Սակայն, ներգրավվածությունը համեմատաբար ցածր որակի է, երբ մասնակցությունը, հանրությանը տեղեկություն տրամադրելը և նրանց կարծիքը լսելը (խորհրդակցությունը) միայն խորհրդանշական է: Ներգրավվածության ամենացածր մակարդակը՝ ցուցադրական մասնակցությունը, իրականում անգործություն է:

Նման իրավիճակ ավելի հաճախ է հանդիպում որոշումների կայացման գործընթացում: Նման մանիպուլյացիայի ժամանակ քաղաքացիներին ձևականորեն ընդգրկում են տեղական մարմինների տարբեր խորհրդատվական խորհուրդների կամ կոլեգիաների կազմի մեջ: Սա պատրանք է ստեղծում, թե իբր որոշումների կայացման գործընթացը տեղի է ունենում քաղաքացիների մասնակցությամբ: Իրականաում՝ նման պայմաններում տեղական մարմինները փորձում են ստեղծել ու տարածել իրենց ցանկալի հասարակական կարծիքը:

Մյուս կողմից, իրական մասնակցության ժամանակ որոշումների կայացման գործընթացն ավելի երկար և բարդ է, ինչը տեղական մարմինների համար վերահսկողությունը կորցնելու ռիսկեր է ստեղծում:

Եթե ինքնակառավարման իրականացմանը մասնակցությունը պատրանքային է, և տեղական մարմինները դիմում են մանիպուլյացիայի միջոցների, ապա տեղական քաղաքականությունն ավելի քիչ է համապատասխանում տեղական կարիքներին: Տեղական մարմինների ընդունած որոշումը չի արտացոլում տեղի բնակչության ընդհանուր շահերը: Դրան կարելի է հասնել միայն այն պայմաններում, երբ մասնակցության աստիճանը բնութագրվում է քաղաքացիների առավելագույն ներգրավվածությամբ:

→ **ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Տեղական ինքնակառավարման լիազորությունները սահմանված են օրենքով, որոնք ամբողջական են և բացառիկ: Ինքնակառավարումը իրավասու է օրենսդրությամբ սահմանված կարգով որոշումներ ընդունել բոլոր այն հարցերի վերաբերյալ, որոնք չեն պատկանում օրենքով կառավարման այլ մակարդակների (կենտրոնական, ինքնավար) լիազորություններին և, միևնույն ժամանակ, դուրս չեն գալիս սույն օրենքով սահմանված շրջանակից:

Համայնքի կողմից ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարմինները տեղական նշանակության հարցերի վերաբերյալ որոշումներ են կայացնում օրենքով սահմանված լիազորություններին համապատասխան: Դրանք կոչվում են սեփական (բացառիկ) լիազորություններ և սահմանված են «Տեղական ինքնակառավարման օրենսգրքով»:

Ավանդաբար, ինքնակառավարման սեփական լիազորությունները կապված են կոմունալ և սոցիալ-մշակութային խնդիրների և դրանց ապահովման հետ:

Ինքնակառավարման լիազորությունները ըստ ընդհանուր նշանի կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- ընդհանուր վարչական տարածք,
- տնտեսական զարգացում,
- ֆինանսական ոլորտ,
- տարածքային պլանավորում և շինարարություն,
- բնական ռեսուրսների և գույքի կառավարում, բարեկարգում/ենթակառուցվածքներ/ կոմունալ ծառայություններ,
- կրթություն/մշակույթ/սպորտ/հանգիստ և սոցիալական պաշտպանություն:

Այստեղից մի քանի ոլորտում ծառայությունների մատուցումը և տարբեր խնդիրների լուծումը լիովին ինքնակառավարման իրավասություններ են, իսկ մյուսները բաժանված են տեղական և կենտրոնական իշխանությունների միջև:

Ինքնակառավարման լիազորությունները ներառում են.

Ընդհանուր վարչական

- տեղական մարմինների կառուցվածքի ստեղծում և կանոնակարգերի ընդունում,
- պաշտոնատար անձանց ընտրություն, նշանակում և ազատում,
- մունիցիպալիտետի բաժանում վարչական միավորների,
- մունիցիպալիտետի խորհրդանիշների որոշում, կոչումների և պարգևների ներդրում,
- աշխարհագրական օբյեկտների անվանակոչում օրենքով սահմանված կարգով,
- միջմունիցիպալ համագործակցություն և համատեղ ծառայությունների ստեղծում,
- հավաքների և ցույցերի անցկացման հետ կապված հարցերի կարգավորում,
- տեղական արխիվի ստեղծում,

Տնտեսական զարգացում.

- ռազմավարական զարգացման փաստաթղթերի կազմում և իրականացում,
- զբոսաշրջության և գյուղատնտեսության աջակցություն,
- ներդրումների և նորարարությունների ներգրավում,
- զբաղվածության խթանման ծրագրերի իրականացում,

Ֆինանսական (ֆինկալ) դաշտ.

- բյուջեի նախագծի պատրաստում, քննարկում և հաստատում, բյուջեի կատարման հաշվետվության լսում և գնահատում,
- բյուջետային միջոցների տնօրինում, տեղական գնումների իրականացում,
- գույքահարկի դրույքաչափի սահմանում շեմային գումարի սահմաններում,
- տեղական տուրքերի ներդրում և վերացում, դրանց դրույքաչափերի սահմանում սահմանային չափերի շրջանակներում,

Տարածքային պլանավորում և շինարարություն.

- Տարածքային պլանավորման, գլխավոր հատակագծերի և զարգացման պլանների/զարգացման մանրամասն պլանների մշակում և հաստատում,
- Շինարարության թույլտվության տրամադրում,
- Շինարարության վերահսկողության իրականացում,

Բնական ռեսուրսների, հողօգտագործման և գույքի կառավարման ոլորտ.

- Սեփականությունում առկա գույքի կառավարում և տնօրինում,
- Տեղական նշանակության բնական պաշարների (ջուր, անտառ և այլն) կառավարում,

Բարեկարգման, ենթակառուցվածքների և կոմունալ ծառայությունների ոլորտ.

- Տարածքի բարեկարգման, ենթակառուցվածքների զարգացման և կոմունալ ծառայությունների կառավարման ոլորտ,
- Փողոցների, այգիների, պուրակների և այլ հասարակական վայրերի մաքրում,
- Տարածքների կանաչապատում և պահպանում,
- Մունիցիպալ (կենցաղային) թափոնների հավաքում/հեռացում,
- Զրամատակարարում և ջրահեռացում,
- Արտաքին լուսավորության կազմակերպում և սպասարկում,
- Տեղական նշանակության ճանապարհների կառավարում և տեղական նշանակության ճանապարհներով երթևեկության կազմակերպում,
- Ավտոկայանատեղերի ապահովում և կանգառի/կայանման կանոնների կարգավորում,
- Բնակչության համար մունիցիպալ տրանսպորտի ծառայության կազմակերպում,
- Վարչական սահմաններով կանոնավոր ուղևորափոխադրումների թույլտվության տրամադրում,
- Արտաքին առևտրի, ցուցահանդեսների, շուկաների և տոնավաճառների կարգավորում,
- Արտաքին գովազդի տեղադրման կարգավորում,
- Ընտանի կենդանիներ պահելու կանոնների սահմանում և թափառող կենդանիների հետ կապված խնդիրների լուծում,
- Գերեզմանոցների կազմակերպում և պահպանում,

Կրթություն, մշակույթ, սպորտ և հանգիստ.

- Տեղական ինքնության, ստեղծագործական գործունեության և մշակութային ժառանգության պաշտպանություն և զարգացում,
- Տեղական նշանակության մշակութային հուշարձանների պահպանում, վերակառուցում և վերականգնում,
- Գրադարանների, ակումբային հաստատությունների, կինոթատրոնների, թանգարանների, թատրոնների, ցուցասրահների և մարզական և հանգստի օբյեկտների գործունեության ապահովում և նոր օբյեկտների կառուցում,

Սոցիալական ոլորտ.

- Նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների ստեղծում և դրանց գործունեության ապահովում,
- Վաղ և նախադպրոցական ուսումնական հաստատությունների ավտորիզացիա,
- Տեղական նշանակության հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների և տարեցների համար համապատասխան ենթակառուցվածքների զարգացում, ներառյալ հանրային հավաքատեղիների և մունիցիպալ տրանսպորտի պատշաճ հարմարեցում և կահավորում,
- Անօթևանների կացարանով ապահովում և հաշվառում,
- Սոցիալական և առողջապահական պաշտպանության ծրագրերի մշակում,

և այլ հարցեր, որոնք օրենքով բացառված չեն ինքնակառավարման լիազորություններից և չեն պատկանում կենտրոնական կամ ինքնավար հանրապետության իրավասությանը: Իսկ նշվածը, ինքնակառավարման այսպես կոչված կամավորական լիազորությունն է, որը կիսում է սեփական լիազորությունների իրականացման սկզբունքները: Ըստ այդմ, դրա շրջանակներում տեղական մարմինների կողմից իրականացվող գործունեությունը չպետք է արգելված լինի օրենքով և պետք է հիմնված լինի արդյունավետության, հրապարակայնության, թափանցիկության և այլ սկզբունքների վրա: Այսպես կոչված կամավորական լիազորությունների շրջանակներում մշակված նախագծերը պետք է հնարավորինս համապատասխանեն տեղական կարիքներին, և դրա պատրաստումը/ իրականացումը պետք է լինի բնակչության նախաձեռնությունը:

Սեփական լիազորություններից բացի, կան պատվիրակված լիազորություններ, որոնք պատկանում են կենտրոնական կամ ինքնավար իշխանության իրավասություններին, սակայն տեղական մարմինների կողմից դրա առանձին բաղադրիչների իրականացումն ավելի արդյունավետ է: Այս տեսակի լիազորություններն ինքնակառավարմանը կարող են փոխանցվել միայն օրենքի և համաձայնագրի հիման վրա՝ համապատասխան ֆինանսական և նյութական ռեսուրսների փոխանցմամբ, որոնք տեղական մարմնի կողմից պահանջվում են պատվիրակված լիազորությունների շրջանակներում իրականացվելիք գործունեության համար: Տեղական մարմիններին լիազորություններ փոխանցելիս անհրաժեշտ սկզբունք է, որ տեղական մարմինները պետք է ունենան միջոցներ՝ այն տեղական պայմաններին համապատասխան իրականացնելու համար:

Յիմնական դեպքում ինքնակառավարման լիազորությունները պատվիրակված են օրենքով, ինչը տեղական մարմիններն իրականացնում են պարբերաբար:

Յանրային առողջապահություն.

- Վարակիչ հիվանդությունների տարածման դեմ միջոցառումների իրականացում,
- Կենդանիների կատաղության դեմ պատվաստում,
- Ուսումնական հաստատությունների սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման հսկողություն,
- Յասարակական նշանակության հիմնարկներում սանիտարական նորմերի պահպանման վերահսկում,
- Իմունոպրոֆիլակտիկայի համար նյութերի ընդունում, պահպանում և բաշխում,
- Առաջնային համաճարակաբանական հետազոտությունների անցկացման նպաստում,
- Տուբերկուլյոզի հսկողություն՝ սերտ շփումների ուսումնասիրություն, ժամանակին հետազոտման խթանում, կրթական գործունեության իրականացում և այլ հարցեր:

Երկրի պաշտպանունակություն.

- Զինվորական հաշվառման իրականացում,
- Պարտադիր զինվորական ծառայության համար զորակոչի կազմակերպում,
- Զորակոչիկի պարտադիր զինվորական ծառայության զորակոչում,

- Զորահավաքային պահեստազորայինների հաշվառում և զորակոչ:
- Səfərbərlik üzrə ehtiyatda olanların qeydiyyatı və çağırışı;

Կրթության ոլորտ.

- Հանրակրթական ենթակառուցվածքների կառուցում և վերականգնում
- Աշակերտների համար տրանսպորտի տրամադրում:

Ընդհանուր վարչական ոլորտ.

- Ֆիզիկական անձի համար բարձրլեռնային բնակավայրում մշտապես բնակվող անձի կարգավիճակի շնորհում, դադարեցում, կասեցում, վերականգնում,
- Քաղաքացիական ակտերի մասին օրենքով պատվիրակված գործառույթներ:

Այսպիսով, տեղական մարմինների գործունեությունը նշանակում է տեղական բնակչությանը սեփական և պատվիրակված լիազորությունների շրջանակներում հանրային ծառայությունների մատուցում և նրանց առջև ծառայած խնդիրների լուծում, ինչը, առաջին հերթին, պետք է համապատասխանի տեղի բնակչության շահերին և առավելագույն կերպով բավարարի նրանց կարիքները: Տեղական մարմիններին պետք է տրամադրվեն անհրաժեշտ ռեսուրսներ իրենց լիազորություններն իրականացնելու համար, որոնք նրանք պետք է օգտագործեն արդյունավետ և թափանցիկ:

→ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Պետական կառավարման համակարգում որոշումների կայացման գործընթացը ներառում է մի քանի փուլ: Տեղական մարմինների կողմից իրենց լիազորությունների իրականացումը պետական կառավարման մի մասն է, որը հիմնված է օրինականության, արդյունավետության, հրապարակայնության, թափանցիկության և պատասխանատվության սկզբունքների վրա: Այսպիսով, տեղական մարմինների որոշումը պետք է կայացվի՝ հաշվի առնելով ծախսերի և ծառայությունների արդյունավետությունը: Ինչպես ցանկացած պետական հաստատություն, տեղական մարմինները նույնպես պարտավոր են առաջնորդվել պետական կառավարման լավագույն սկզբունքներով:

Տեղական մակարդակում, ինքնակառավարման իրավասությունների շրջանակում, որոշումների կայացման գործընթացը սկսվում է՝ անմիջականորեն տեղական մարմինների կամ բնակչության նախաձեռնությամբ, հարցի օրակարգ սահմանելով: Իսկ մեկ կոնկրետ որոշման գործընթաց ավարտվում է ստացված արդյունքների գնահատմամբ: Նշված գործընթացը փուլային է, որտեղ օրակարգի ստեղծման հետևյալ փուլերն են՝ այլընտրանքների քննարկում, որոշման նախագծի պատրաստում, որոշման նախագծի հանրային քննարկում, որոշման ընդունում, կատարում, մոնիտորինգ և գնահատում:



Օրակարգում մտցնել - Տեղական մարմինների իրավասությանը պատկանող հարցի ձևավորումը որպես օրակարգ, մեծ մասամբ, ուղղակիորեն բխում է այդ մարմինների նախաձեռնությունից կամ իրավական պարտավորություններից: Որոշ դեպքերում սա բնակչության անմիջական նախաձեռնությունն է, որի համար կան իրավական երաշխիքներ, որոնք հնարավորություն են տալիս տեղական համայնքին օրակարգ մտցնել այս կամ այն հարցը:

Այլընտրանքների քննարկում - Ցանկացած հարցի լուծումը պահանջում է այլընտրանքների մշակում և քննարկում, որպեսզի տեղական մարմնի կողմից անցկացվող միջոցառումը լինի որակյալ: Կարևոր է այս գործընթացում ներգրավել տեղական համայնքին, քանի որ ավելի շատ հնարավոր լուծումներ են ներկայացվում և դրանցում ավելի ընդգծված են տեղական շահերը:

Որոշման նախագծի պատրաստում - Այս փուլը ներառում է ընտրված այլընտրանքի նախագծում, որը պահանջում է ցանկացած որոշում: Ուղղակիորեն ընտրված այլընտրանքի նախագծման մեջ հիմնական դերը խաղում է տեղական մարմինների բյուրոկրատական ապարատը, քանի որ նրանք ունեն համապատասխան մասնագիտական գիտելիքներ և փորձ: Ուստի այս փուլում քաղաքացիների մասնակցության կարիք չկա:

Որոշման նախագծի քննարկում - Այս փուլում որոշման նախագիծը քննարկվում է հրապարակայնորեն, հետևաբար կարևոր է հանրության մասնակցությունը և քաղաքացիների՝ կարծիքներով ու դիտողություններով կիսվելը: Այս փուլում պետական կառավարման սկզբունքը՝ հրապարակայնությունը, պետք է հնարավորինս պաշտպանված լինի, և տեղի բնակչությունը պետք է հնարավորություն ունենա անարգել արտահայտելու իր դիտողություններն ու կարծիքները:

Որոշուման կայացում - Համապատասխան անձը/կազմակերպությունը որոշում է կայացնում այս կամ այն հարցի վերաբերյալ: Սակայն, որոշում կայացնողը, նախքան որոշում կայացնելը, կարող է խորհրդակցել համապատասխան խմբերի հետ: Եթե որոշումը կայացվում է կոլեգիալ, ուրեմն պետք է ապահովել դրա հրապարակայնությունը:

Իրականացում - Այս փուլը ենթադրում է որոշման իրականացում, որտեղ հնարավոր է ուղղակիորեն ներգրավել քաղաքացիներին սեփական միջոցներով կամ ներգրավել համապատասխան ռեսուրսներ:

Մոնիտորինգ - Վերաբերում է անմիջական իրականացման զուգահեռ փուլին: Բնակչությունն ավելի շատ հետաքրքրված է դրանով, քան տեղական մարմինները, և նրա մասնակցությունը չափազանց կարևոր է: Մոնիտորինգի փուլում ներգրավվածությունը հիմնականում սահմանափակվում է տեղական մարմինների պատրաստած հաշվետվություններին ծանոթանալով և քննարկմանը մասնակցելով: Որոշ դեպքերում մոնիտորինգը կարող է իրականացվել ուղղակիորեն տեղական հասարակական միավորումների կողմից:

Գնահատում - Վերջին փուլն է, որի ընթացքում կարևոր է վերլուծել ամբողջ գործընթացի ընթացքում հայտնաբերված յուրաքանչյուր թերությունը: Այս գործընթացում պակաս կարևոր չէ բնակչության գնահատականը, որը շատ դեպքերում հիմք է դառնում նոր օրակարգ ստեղծելու համար: Նախկին որոշման արդյունքների պատշաճ վերլուծության արդյունքում կարելի է առավել արդյունավետ ծրագրել նոր հարցի լուծման ուղիները:

Այսպիսով, տեղական մարմինների կողմից իրենց իրավասության շրջանակներում իրականացվող կառավարման գրեթե բոլոր փուլերում հնարավոր և անհրաժեշտ է հանրային մասնակցությունը, ինչը հիմք է հանդիսանում ինքնակառավարման արդյունավետ իրականացման համար: Համայնքի մասնակցությամբ ընդունված որոշումն ավելի շատ համահունչ է համայնքի շահերին, ինչը հանդիսանում է ինքնակառավարման հիմնական գաղափարը:

→ ԶԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԳՈՒԹՅԱՆ ՖՈՐՄԱԼ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարման իրականացմանը սահմանվում է ֆորմալ և ոչ ֆորմալ մեխանիզմներով: Իր հերթին՝ քաղաքացու մասնակցության ցանկությունն ու հետաքրքրությունն առաջանում է այն դեպքում, երբ նա տեսնում է, որ տեղական մարմինները իրականում կարող են հանրային ծառայություններ մատուցել: Նման հանգամանքը հիմք է դառնում քաղաքացիների կողմից ֆորմալ մեխանիզմների կիրառման համար:

Ինքնակառավարման իրականացմանը մասնակցության ֆորմալ մեխանիզմների առկայությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- քաղաքացիների տեղեկացվածություն,

- որոշման վրա ազդելու ունակություն,
- կատարման գործընթացում կայացված որոշումը վերահսկելու լծակ:

Այս տեսակի մեխանիզմները սահմանված են իրավական նորմերով, և տեղական մարմինները պարտավոր են ստեղծել համապատասխան կազմակերպչական և նյութատեխնիկական պայմաններ՝ ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության համար: Մյուս կողմից, ցանկացած անձ ունի անսահմանափակ իրավունք՝ օգտվելու մասնակցության իրավունքից և օգտագործելու դրա համար անհրաժեշտ մեխանիզմները: Պետք է նշել, որ ֆորմալ մեխանիզմները պետք է լինեն հավասարապես արդյունավետ և հասանելի բոլորի համար:

Քաղաքացիների ինքնակառավարմանը մասնակցության իրավական (ֆորմալ) ձևերը կարելի է բաժանել երեք խմբի.

- իրազեկում,
- որոշումների կայացման գործընթացին մասնակցելու հնարավորություն,
- ընդունած որոշման կատարումը վերահսկելու ունակություն:

Բոլոր երեք խմբերը փոխկապակցված են, հետևաբար, կատարյալ մասնակցության համար անհրաժեշտ է բոլոր երեք բաղադրիչների համալիր օգտագործումը: Հակառակ դեպքում, մասնակցությունը ինքնակառավարման իրականացմանը լիարժեք տեղի չի ունենա և չի բավարարի համապատասխան որակը:

Տեղական ինքնակառավարման իրականացմանը մասնակցության օրենքով սահմանված ձևերն են.

Բնակավայրի ընդհանուր ժողով.

- Բնակավայրի ընդհանուր ժողովը գյուղի/ավանի/քաղաքի բնակչության ինքնակազմակերպմանը և տեղական ինքնակառավարման իրականացմանը քաղաքացիների մասնակցության ձև է, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս հավաքվել և քննարկել իրենց բնակավայրում առկա խնդիրները և դրանք ներկայացնել մունիցիպալ մարմիններին:
- Ընդհանուր ժողովի անդամ է համապատասխան բնակավայրում գրանցված ընտրողը:
- Ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեն համապատասխան բնակավայրի տարածքում գտնվող անշարժ գույքի սեփականատերը և բնակավայրում բնակվող այլ չափահաս անձինք:
- Ընդհանուր ժողովն իրավասու է իր գործունեությունն իրականացնելու համար ընտրել «Ընդհանուր ժողովի ընտրյալ»:
- Ընդհանուր ժողովն իրավասու է քննարկել բնակավայրի բնակիչների համար կարևոր հարցեր և առաջարկություններ ներկայացնել մունիցիպալիտետին:
- Բնակավայրի ընդհանուր ժողով իրավիքելու իրավունք ունեն.
 1. Համապատասխան բնակավայրում գրանցված ընտրողների ոչ պակաս, քան 5 տոկոսը,

2. Մունիցիպալիտետի քաղաքապետը՝ իր նախաձեռնությամբ կամ սակրեբուլոյի պահանջով,

3. Ընդհանուր ժողովի ընտրյալը:

- Ընդհանուր ժողովի ժամանակ կազմվում է ընդհանուր ժողովի արձանագրություն, որտեղ պետք է նշվի հետևյալ տեղեկությունները՝ ընդհանուր ժողովի անցկացման ամսաթիվը և վայրը, արձանագրության համարը, ընդհանուր ժողովի կողմից քննարկված հարցը կամ հարցերը և ընդունված որոշումը կամ որոշումները, ընդհանուր ժողովին ներկա ընդհանուր ժողովի անդամների թիվը:
- Ընդհանուր ժողովն իրավասու է, եթե դրան մասնակցում է ընդհանուր ժողովի անդամների առնվազն 20%-ը:

Պետիցիա. (Խնդրագիր)

- Պետիցիա ներկայացնելու իրավունք ունի գրանցված ընտրողների ոչ պակաս, քան 1%-ը կամ ընդհանուր ժողովը:
- Պետիցիան գրվում և հանձնվում է սակրեբուլոյի նախագահի անունով:
- Պետիցիայով կարող է նախաձեռնվել իրավական ակտի նախագիծ, իրավական ակտի մշակման առաջարկ կամ սկզբունքներ և համայնքի ավագանու կողմից ընդհանուր նշանակության խնդրի ուսումնասիրության/քննարկման/լուծման խնդրանք:
- Սակրեբուլոն պարտավոր է պետիցիայի կարգով ստացված նախագիծը գրանցումից հետո մեկամսյա ժամկետում քննարկել սակրեբուլոյի նիստում:

Քաղաքացիական խորհրդատվական խորհուրդ.

- Քաղաքապետարանի կոլեգիալ խորհրդակցական մարմին, որը հավաքվում է առնվազն երեք ամիսը մեկ անգամ:
- Խորհրդում ընդգրկված են ձեռնարկատիրական և ոչ ձեռնարկատիրական իրավաբանական անձանց և բնակչության ներկայացուցիչներ:
- Քաղաքապետը պարտավոր է խորհրդին ներկայացնել բյուջեի նախագիծը, տարածքային պլանավորման փաստաթղթերը, ենթակառուցվածքային և սոցիալական նախագծերը:
- Խորհուրդն ինքը, բացի պարտադիր հարցերից, իրավասու է սեփական նախաձեռնությամբ քննարկել ցանկացած այլ հարց:
- Տարին մեկ անգամ քաղաքապետը պետք է գործունեության հաշվետվություն ներկայացնի խորհրդին:

Կատարված աշխատանքի վերաբերյալ հաշվետվության լսում

- Քաղաքապետը և սակրեբուլոյի անդամը պարտավոր են տարին առնվազն մեկ անգամ՝ մինչև նոյեմբերի 1-ը, ընտրողների հետ կազմակերպել հանրային հանդիպումներ և հաշվետվություն ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ, իսկ հաշվետվության քննարկման ժամանակ պատասխանել ընտրողների կողմից տրվող հարցերին:
- Ընտրողն իրավունք ունի առանց սահմանափակումների մասնակցել քաղաքապետի և սակրեբուլոյի անդամի հանրային հաշվետվությունների քննարկմանը:
- Տեղական մարմինները պարտավոր են ապահովել քաղաքապետի և սակրեբուլոյի անդամի կողմից ներկայացված հաշվետվության հրապարակումը:

Բացի թվարկված ձևերից, սակրեբուլոն կարող է ներդնել լրացուցիչ մասնակցության մեխանիզմներ: Գործնականում սա կարող է լինել այսպես կոչված բաց դռների նիստեր, արտազնա նիստեր, հանրային կարծիքի ուսումնասիրություն այս կամ այն հարցի շուրջ և այլ միջոցներ: Իսկ ինքնակառավարման իրականացմանն աջակցող կառույցներ կարող են լինել հանրային դահլիճները, սակրեբուլոյի խորհրդատվական խորհուրդները և այլն:

Քաղաքացիների մասնակցության բարձր աստիճանը ինքնակառավարման իրականացմանը պայմանավորված է նրանց տեղեկացվածությամբ: Իսկ տեղեկատվության հասանելիությունը երաշխավորված է օրենքով: Մի կողմից տեղական մարմինները պարտավոր են պարբերաբար հրապարակել հանրային տեղեկություն, մյուս կողմից՝ ցանկացած անձ իրավունք ունի պահանջել տարբեր տեսակի հանրային տեղեկություն, ինչը նույնպես կարգավորվում է օրենքով:

➔ **ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

Տեղական ինքնակառավարման քաղաքականության հիմնական փաստաթղթերից է բյուջեն, որն արտացոլում է մեկ տարվա ընթացքում տեղական մարմինների կողմից ընդունված և ընդունվելիք որոշումները, ծախսերը և ակնկալվող արդյունքները:

Տեղական մարմիններն ինքնուրույն են իրականացնում բյուջետային գործընթացը, ինչը ենթադրում է կառավարման այլ մակարդակների չմիջամտություն: Իր հերթին, բյուջետային գործընթացն ընդգրկում է երկամյա ցիկլ: Մասնավորապես, այս գործընթացը ներառում է հաջորդ տարվա բյուջեի պլանավորումն ու հաստատումը, միաժամանակ ընթացիկ տարվա հաստատված բյուջեի կատարումն ու հաշվետվությունը: Այսպիսով, տեղական մարմինների գործունեության ցանկացած ժամանակաշրջան համընկնում է բյուջետային գործընթացի հետ: Ուստի ինքնակառավարումն իրականացնելու համար այս գործընթացում կարևոր է բնակչության մասնակցությունը: Հաշվի առնելով առկա իրավական մեխանիզմները՝ ցանկացած քաղաքացի հնարավորություն ունի ներգրավվելու բյուջեի պլանավորման, հաստատման, կատարման և հաշվետվության փուլերում:

Տեղական բյուջեի գործընթացը սկսվում է մարտին՝ առաջնահերթությունների փաստաթղթի պատրաստմամբ: Հենց այս փաստաթղթի վրա է հիմնվում հաջորդ տարվա բյուջեի նախագիծը: Առաջնահերթությունների փաստաթուղթը ինքնակառավարվող միավորի զարգացման հիմնական ծրագիրն է, որը ներառում է միջնաժամկետ գործողությունների

ծրագրեր:

Ելնելով փաստաթղթի անվանումից՝ պարզ է դառնում, որ փաստաթուղթը բաղկացած է տեղական կարիքներին ուղղված առաջնահերթություններից և դրանց իրականացման ուղիներից: Այսպիսով, այս փուլում չափազանց կարևոր է բնակչության մասնակցությունը ինքնակառավարման իրականացմանը: Այդ նպատակով կարող են օգտագործվել հասարակական կարծիքի ուսումնասիրման միջոցներ, քաղաքացիներից առաջարկներ ստանալու գործիքներ, հանրային հանդիպումներ անցկացնելու և այլ մեխանիզմներ:

Սակայն, մասնակցությամբ կազմված առաջնահերթությունների փաստաթուղթը միայն տեղական իշխանությունների պատասխանատվությունը չէ: Փաստաթղթի պատրաստման համար պատասխանատու է նաև տեղի բնակչությունը, որպեսզի հնարավորինս հաշվի առնվեն նրանց կարիքները:

Հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և առաջնահերթությունների փաստաթուղթը սակրեբուլոյին ներկայացնելուց հետո սկսվում է դրա հանրային քննարկումը: Այդ նպատակով սակրեբուլոն անցկացնում է հանրային նիստեր, որտեղ բնակչությանը ներկայացնում է բյուջեի նախագծով նախատեսված ծրագրերն ու ենթածրագրերը, լսում բնակչության դիտողություններն ու կարծիքները: Ի վերջո, սակրեբուլոյի պատրաստած դիտողությունները պետք է հիմնված լինեն բնակչության հետ հանրային քննարկման արդյունքների վրա: Սակայն, շահագրգիռ անձինք կամ խմբերը կարող են իրենց կարծիքը ներկայացնել սակրեբուլոյին՝ առանց անմիջականորեն քննարկմանը մասնակցելու: Բյուջետային գործընթացի այս փուլը սկսվում է նոյեմբերի 15-ից ոչ ուշ և շարունակվում՝ մինչև նոյեմբերի 20-ը: Սա այն ժամանակահատվածն է, երբ ինքնակառավարում իրականացնելու նպատակով, բյուջետային գործընթացը պահանջում է բնակչության ակտիվ մասնակցություն՝ հաջորդ տարվա բյուջետային ծրագրերում տեղի բնակչության շահերն ավելի լավ արտացոլելու համար:

Հանրային քննարկման ենթակա բյուջեի նախագիծն առնվազն պետք է ներառի.

- եկամուտները (աղբյուրները), ծախսերը (ներառյալ աշխատավարձը), ոչ ֆինանսական և ֆինանսական ակտիվների փոփոխությունը, մնացորդի փոփոխությունը, ծրագրերի և ենթածրագրերի բյուջետային հատկացումները,
- ծախսերի և ոչ ֆինանսական ակտիվների աճի գործառական դասակարգումը,
- բյուջեի ավելցուկի կամ դեֆիցիտի չափը,
- պահուստային ֆոնդի ծավալը,
- Դոնորների կողմից հատկացված նպատակային վարկերով և դրամաշնորհներով ֆինանսավորվող ծրագրեր,
- Առաջնահերթությունները, որոնց շրջանակներում բյուջետային կազմակերպությունները բյուջետային ֆինանսավորմամբ իրականացնում են ծրագրեր/ենթածրագրեր, դրանց նկարագրությունը և նպատակները:

Բացի այս ցանկից, բյուջեի նախագծի հետ միասին սակրեբուլոյի քննարկմանն է ներկայացվում առաջնահերթությունների փաստաթուղթը, որը ներառում է

մունիցիպալիտետի միջնաժամկետ զարգացման տեսլականն ու գործողությունների ծրագիրը: Իսկ բյուջետային նախագծին կից փաստաթուղթը բացատրական քարտ և համառոտ տեղեկություն է ընթացիկ տարվա բյուջեի կատարման վերաբերյալ:

Բնակչության մասնակցությունը տեղական բյուջեի գործընթացին անհրաժեշտ է ոչ միայն հաջորդ տարվա բյուջեի պլանավորման, այլև ընթացիկ տարվա հաստատված հիմնական ֆինանսական փաստաթղթի կատարման ժամանակ: Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան մեկ ամիսը՝ սակրեբուլոյին է ներկայացվում ընթացիկ տարվա բյուջեի կատարման հաշվետվություն, իսկ բյուջետային տարվա ավարտից (դեկտեմբերի 31) ոչ ուշ, քան երկու ամիսվա ընթացքում՝ քաղաքապետը սակրեբուլոյին է ներկայացնում նախորդ տարվա տարեկան բյուջեի կատարողականը, որը հրապարակայնորեն քննարկվում է վերջինիս կողմից: Քննարկումից հետո, ոչ ուշ, քան մայիսի 1-ը կայացնում է որոշում հաստատման կամ չհաստատման մասին:

Տեղական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը և դրա հանրային քննարկումը տեղական մարմինների հաշվետվողականությունը բարձրացնող և բնակչությանը տեղեկատվություն տրամադրող կարևոր խնդիրներից է: Սա քաղաքացիների կողմից տեղական խնդիրների լուծման գործընթացը վերահսկելու միջոցներից մեկն է:

Բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը պետք է առնվազն ներառի.

- ծրագրի հետ կապված եկամուտների և վճարումների կատարման մասին տեղեկություն,
- տարեսկզբին և տարվա վերջում առկա բյուջետային մնացորդի և 30%-ից ավելի շեղումների բացատրություններ,
- տեղեկություն պահուստային և նախորդ տարվա պարտքերի մարման ֆոնդերից միջոցների հատկացման մասին,
- սահմանված առաջնահերթությունների շրջանակներում իրականացված ծրագրերի/ ենթածրագրերի նկարագրությունը և ձեռք բերված արդյունքները,
- մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց բյուջետային ցուցանիշների կատարում:


Վերոնշյալցանկը իրենից ներկայացնում է օրենքով սահմանված պարտադիր տեղեկություն, որը պետք է պարունակի բյուջեի տարեկան կատարման հաշվետվությունը: Սակայն, սա չի բացառում, որ հաշվետվության փաստաթուղթը շահագրգիռ կողմերին տրամադրի լրացուցիչ, ավելի մանրամասն տեղեկություն կատարողականի մասին, որպեսզի տեղական համայնքին հասանելի լինի ավելի շատ տեղեկություն իրականացված գործողությունների, ծախսերի և ստացված արդյունքների մասին:

→ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ - ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

Ինքնակառավարման իրականացմանը մասնակցության ժամանակակից մեխանիզմներից է մասնակցային բյուջետավորումը, որը հաճախ անվանում են քաղաքացիական բյուջե: Այս մեխանիզմը մասնակցային ժողովրդավարության հայտնի մոդելներից է, որի նպատակը, առաջին հերթին, հակառակ ավանդական մոտեցմանը, հասարակության ակտիվ դերը հանրային քաղաքականության մեջ ամրապնդելն է: Տեղական մարմինները մասնակցային բյուջետավորման պայմաններում քաղաքացիներին հնարավորություն են տալիս իրենց համար սահմանել առաջնահերթ խնդիրներ և նախագծերի մշակման միջոցով ներգրավվել տեղական բյուջեի որոշակի մասի ծախսման գործընթացում: Սա ենթադրում է տեղական բյուջեում քաղաքացիական բյուջետավորման համար համապատասխան միջոցների հատկացում, որոնք կուղղվեն քաղաքացիների կողմից պատրաստված նախագծերի ֆինանսավորմանը:

Իր հերթին, մասնակցային բյուջետավորման մոդելը հիմնված է տարածքային (օրինակ՝ փողոց, թաղամաս, բնակավայր) կամ թեմատիկ (օրինակ՝ տրանսպորտ, շրջակա միջավայրի պաշտպանություն, կրթություն) բնութագրերի վրա: Սակայն, քաղաքացիների կողմից պատրաստված նախագծերի չափորոշիչների սահմանումը կարող է համատեղել վերը նշված երկու հատկանիշները: Այստեղ հարկ է նշել, որ տեղական մարմինների կողմից չափորոշիչների սահմանման գործում կարևոր է տեղական համայնքի մասնակցությունը:

Ինքնակառավարման իրականացմանը մասնակցության ձևը՝ քաղաքացիական բյուջետավորումը, պահանջում է վերջինիս կանոնակարգավորում և հստակ չափորոշիչների առկայություն, որոնց նպատակը պետք է լինի արդյունավետության, հրապարակայնության, թափանցիկության և արդար բաշխման սկզբունքի ապահովումը: Մասնակցային բյուջետավորումը ներառում է մի քանի փուլ:



Գործընթացի նախապատրաստում - Տեղական մարմինների կողմից մասնակցային բյուջետավորման մեխանիզմի ներդրման համար անհրաժեշտ է պատշաճ նախապատրաստում: Մասնավորապես, անհրաժեշտ է՝ բացահայտել կարիքները, նախապատրաստել չափորոշիչները, սահմանել համապատասխան ֆոնդը, համալրել ընտրող հանձնաժողովը և սահմանել որոշումների ընդունման կարգը:

Իրազեկում - Այս փուլը ներառում է քաղաքացիներին քաղաքացիական բյուջետավորման վերաբերյալ պատշաճ տեղեկություն տրամադրելը: Որքան շատ քաղաքացիներ տեղեկացված լինեն վերջինիս մասին, այնքան ավելի շատ նախագծերի ընդունում է սպասվում: Սա բարձրացնում է քաղաքացիական բյուջեին հատկացվող միջոցների ծախսման արդյունավետությունը: Այսպիսով, իրազեկման փուլը ինքնակառավարման իրականացմանը մասնակցության հասնելու կարևոր մասերից է:

Նախագծերի ընդունում - Վերաբերում է տեղական մարմինների կողմից քաղաքացիների կողմից պատրաստված նախագծային հայտերի ընդունմանը:

Յամապատասխանության որոշում - Այս փուլում որոշվում է ընդունված նախագծերի համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին և այլ պայմաններին: Վերջինս իրականացվում է տեղական մարմինների բյուրոկրատական ապարատի կողմից:

Նախագծի ընտրություն - Բյուրոկրատական ապարատի կողմից համապատասխանության որոշման հաջորդ փուլը ուղղակիորեն նախագծի ընտրությունն է: Ներկայացված նախագծերի ընտրությունը հիմնականում կատարում են հանձնաժողովները կամ խորհուրդները, որոնց որոշումը պետք է հիմնված լինի կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքի վրա:

Բյուջեի մեջ արտացոլում - Ընտրված նախագիծը պետք է արտացոլվի տեղական բյուջեում: Յամապատասխանաբար, ծրագրի ծախսերն արտացոլվում են հիմնական ֆինանսական փաստաթղթում, իսկ ծրագրի բաղադրիչներն ուղղակիորեն արտացոլվում են ծրագրային մասում:

Իրականացում - Նախագիծը բյուջեում արտացոլվելուց և հաստատվելուց անմիջապես հետո սկսվում է դրա իրականացումը - կատարումը, որն իրականացվում է տեղական մարմինների կողմից:

Մոնիտորինգ/Գնահատում - Այս փուլը ներառում է մոնիտորինգ ծրագրի իրականացման ժամանակահատվածում, այնուհետև՝ գնահատում: Նշված փուլում ներգրավված են ինչպես տեղական մարմինների ներկայացուցիչները, այնպես էլ նախագծի հեղինակները:

Մասնակցային բյուջետավորումը բյուջետավորման գործընթացի մի մասն է, որն իրականացվում է զուգահեռաբար և ներառում է տեղական բյուջեի պլանավորման, հաստատման և իրականացման ժամանակահատվածը:

→ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նորմատիվ ակտեր.

- Վրաստանի Սահմանադրություն
- Տեղական ինքնակառավարման օրենսգիրք
- Բյուջետային օրենսգիրք
- Ընդհանուր վարչական օրենսգիրք

Յրապարակումներ.

- Օ. Մելքաձեն և Զ. Էզուզբախա (2002): Մունիցիպալ իրավունք: Համաշխարհային պառլամենտարիզմի հետազոտական կենտրոն, «Ֆավորիտ» հրատարակչություն, ISBN 99928-69-10-0:
- Ա. Սվանիշվիլի (2016թ): Տարածքային հասարակական ինքնակառավարման նշանակությունն ու դերը տեղական ինքնակառավարման համակարգում: Հանրային կապերի ինստիտուտ, դոկտորական ատենախոսություն:
- Շերի Պ. Արնշտեյն (1969): Քաղաքացիական մասնակցության սանդուղք: Թարգմանություն՝ Գիորգի Կելիշվիլի, հրապարակում՝ Ուրբան Ռեակտոր:
- Ի. Ուրուշաձե (2014): Տեղական ինքնակառավարման գործընթացում քաղաքացիների ներգրավվածության ուղեցույց: Ժողովրդավարական կառավարում Վրաստանում (G3) ծրագիր, USAID:
- Դ. Կիփիանի (2018): Մասնակցային բյուջետավորում - միջազգային փորձ և Վրաստանում ներդրման պրակտիկայի հետազոտություն: Քաղաքացիական հասարակության ինստիտուտ:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ